



2017 թվականին ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի

կողմից իրականացված միջոցառումներ

ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում 2017 թվականին ուսումնական մասով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

1) Վերապատրաստման դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար

ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում 2017 թվականին 90 խմբերի համար կազմակերպվել է 1510 ակ/ժամ (ծրագրով նախատեսված էր 1200 ակ/ժամ) ընդհանուր տևողությամբ վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել և թեստավորվել է 1850 հարկային և մաքսային ծառայող:

2) Ուսումնական դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների (նաև ԼՂՀ հարկային և մաքսային ծառայողների) և հարկ վճարողների համար

Ուսումնական կենտրոնում 2017 թվականին հարկային և մաքսային ծառայողների համար կազմակերպվել է 750 ակ/ժամ տևողությամբ ուսումնական 75 դասընթաց, որոնց մասնակցել է 1558 հարկային և մաքսային ծառայող, իսկ առևտրային, ոչ առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց համար կազմակերպվել է 653 ակ/ժամ տևողությամբ 45 դասընթաց, որոնց մասնակցել է 826 ունկնդիր:

Այլ ուսումնական միջոցառումներ

2017 թվականի ընթացքում Ուսումնական կենտրոնի հետ համատեղ անցկացվել է 169 ակ/ժամ տևողությամբ 5 միջոցառում, որոնց մասնակցել է 119 ունկնդիր (հարկային, մաքսային ծառայողներ, այլ գերատեսչությունների աշխատակիցներ, հարցազրույցի արդյունքում ընտրված քաղաքացիներ): Մասնավորապես՝

- 2017թ հունվարի 16-ից փետրվարի 21-ը Ուսումնական կենտրոնը շարունակել է ՀՀ սահմանային անցման կետերում աշխատանքի ընդունելու համար անցկացված հարցազրույցի արդյունքում ընտրված քաղաքացիների (3-ին և 4-րդ խմբեր) համար կազմակերպված դասընթացների անցկացումը, որոնց մասնակցել է 17 ունկնդիր: Դասընթացների տևողություն կազմել է 94 ակ/ժամ:

- 2017թ հունիսի 26-ից 29-ը Ուսումնական կենտրոնում ՀՀ քաղաքացիների համար կազմակերպվել է «Եվրասիական տնտեսական միության և Հայաստանի Հանրապետության

օրենսդրության հիմնական դրույթներ» և «Մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգչային ծրագիր» թեմայով դասընթաց 20 ակ/ժամ տևողությամբ, որին մասնակցել են 34 ունկնդիր:

- 2017 թվականի նոյեմբերի 30-ին Ուսումնական կենտրոնում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի սովորողների համար անցկացվել է **«Հարկեր, տուրքեր, եկամուտներ»** թեմայով ուսումնական միջոցառում: Միջոցառման տևողություն կազմել է 2 ակ/ժամ, որին մասնակցել են 30 սովորող:

- 2017 թվականի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը Ուսումնական կենտրոնում կազմակերպվել է **«Ներդաշնակ համակարգի գործնական կիրառում»** թեմայով դասախոսություն: Դասընթացի տևողություն կազմել է 38 ակ/ժամ, որին մասնակցել են 26 մաքսային ծառայողներ:

- 2017թ դեկտեմբերի 07-ից 08-ը Ուսումնական կենտրոնում կազմակերպվել է **«Նախնական ուղևորային տվյալների օգտագործման վերաբերյալ»** թեմայով: Դասընթացի տևողություն կազմել է 15 ակ/ժամ, որին մասնակցել են 12 մաքսային ծառայողներ:

3) Շախմատի գրոսմաստերական դպրոց

2017 թվականին Ուսումնական կենտրոնի կազմում իր գործունեությունը հաջողությամբ շարունակել է շախմատի գրոսմաստերական դպրոցը, որտեղ 6 խմբերով 18 ընտրված մասնակիցների համար կազմակերպվել են շախմատի դասընթացներ: